ռուս սպաների և զինուորների հեռանալը ճակատից՝ ամրացած շրջանների պահակությունը յանձնէք ազգային զօրամասերին»:

Կարս–Մերդենեք երկաթուղագծի վարչությունը հեռագրում է յուն. 21–ին. «Երկաթուղային բրիգադի Կարս–Մերդենեք գծի վրա ծառայող ռուս զինուորները լքում են միլիոնաւոր ռուբլիներ արժող նիւթերը և կանգնեցնում շարժումը: Խնդրում ենք կազմել հայկական երկաթուղային գումարտակ և նրան փոխանցել այս բրիգադի և Կարս–Մերդենեք երկաթուղագծի գոյքը»:*)

Սրանք պատահական օրինակներ են լոկ ա՛յն օրերի ռազմաճակատի քայքայումը պատկերացնող առատ նիւթից: Իրապէս դրությունը անհամեմատ աւելի մռայլ էր: Ռազմաճակատը հալչում էր արևից տաքացած ձեան պէս. ռուս զօրքը խելայեղ՝ խուժում էր դէպի Թիկունք, Կովկասեան Լեռնաշղթայի միւս կողմը:

Այս խուժումը տեղի էր ունենում ցաւագին պայմանների մէջ, մասնաւորապէս մահմետական շրջաններում: Անկասկած, Թիւրքերի ներշնչումով, կովկասեան մահմետականները աշխատում էին մի կողմից արագացնել ռուս զօրքերի փախուստը, միւս կողմից՝ խլել նրա զէնքն ու ռազմամթերքը: Զինուորութեան հողի վրա պատահում էին արիւնոտ ընդհարումներ ու ճակատամարտներ նահանջող ռուս զօրամասերի ու Թուրք ազգաբնակութեան միջև: Այդ կարգի արիւնոտ դէպքերից առանձնապէս մեծ յուզում առաջ բերեց Շամքորի կոտորածը, յուն. 8–10–ին:

Յուն. 8–ին, ճակատից հեռացող բազմաթիւ զինուորական գնացքներ եկան–կանգնեցին Շամքոր կայարանի մօտ: Ճանապարհը կտրուած էր և առաջ երթալը անհնար: Գնացքները բերնէ բերան լեցուած էին զինուորներով, ձիերով, կանանցով ու երեխաներով, թնդանօթներով, ռազմամթերքով, մեծաքանակ փամփուշտով ու մթերքով: Զինուորները հարուստ աւար էին տանում իրենց հետ:

Եւ, յանկարծ, գիշերուայ մթութեան մէջ, ամէն կողմից սկսուեց հրացանաձգութիւն: Գնացքները ենթարկուեցին թնդանօթային կրակի: Առաջ եկաւ աննկարագրելի իրարանցում: Զինուորներն էլ, իրենց հերթին, գրաւեցին դիրքեր և գործի դրին գնդացիրները: Տեղի ունեցաւ յուսահատական կռիւ: Ցարձակուողներին յաջողուեց վառել գնացքների մի մասը: Զինուորները անձնատուր եղան:

Պարզուեց, որ յարձակուողները եղել են վրացի Աբխազաւայի զրահապատ գնացքը, զօր. Մաղալովի «Վայրենի դիվիզիան» և հազարաւոր զինուած Թուրք խուժան Գանձակի Մահմ. Ազգային Խորհրդի ղեկավարութեամբ:

Բոլոր գնացքները խուզարկուեցին ու թալանուեցին: Զինուորներից խլուեց ամէն ինչ — զէնք, ռազմամթերք, պարէն, մասնաւոր գոյքը. անգամ վրանների հագուստը հանեցին Թուրք հրոսակները: Գրաւուած թնդանօթներն ու զէնքերը սեփականացրեց Գանձակի Մահմ. Ազգ. Խորհուրդը: Մեծ չուքով աւարը տարուեց Գանձակ: Թուրք սոց.–յեղափոխական պարագլուխ

*) Կովկասեան ճակատի այդ ժամանակաշրջանի վիճակի մասին տես՝ ի միջի այլոց, և զօր. Ղորղանեանի գիրքը: